ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԳԻՏՈՒԹԻՒՆՔ, ԴՊՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐՈՒԵՍՏՔ ԵՒ ՕՐԱԼՈՒՐՔ

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ — ԵՐՈՒԱՆԴ ՏԷՐ-ԱՆԴՐԷԱՍԵԱՆ

ՏՆՕՐԷՆ — ԲԻԼԶԱՆԴ Մ. ՊՕԶԱՃԵԱՆ

Գ. ՏԵՐԶԱՆ — 1900 ՅՈՒՆՈՒԱՐ 8 — ԹՒ 77

„هانرا كيداق" عزته‌سى

HANRAKIDAGUE

JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIQUE

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Տարեկան Պոլսոյ համար	50 Ղրշ.
Դաւառաց համար	60 »
Արտասահման	15 Ֆրք.

ՄԵՐ ՊԱՏ. ԲԱԺԱՆՈՐԴԱՑ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԸ ԶՐԻ Կ'ԸՆԴՈՒՆՈՒԻՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ազգային Տեսութիւն
Բաղ. Պատմ. Ժամանակակից Եւրոպիոյ
Արարչագործութիւն կամ Աշխարհածնութիւն — Ա. Լ.
Անգուր մղձաւանջս — ԹԷՈԴԻԿ
Երկրագործութիւն
Քաղաքական Տեսութիւն
Սուզակն, (Գերմանական բանաստեղծութիւն) — Ռ. Յ. Պ.
Սիրոյ Իտեալը (Բանաստեղծութիւն) — Ա. Լ.

40 փարայ 40

Տպագր. «ԾԱՂԻԿ» Օրաթերթի
Կ'Պոլիս, Գալաթիա, Համտի-Փաշա խան

Արտօնատէր Ա. Լուսինեան

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԳԻՏՈՒԹԻՒՆՔ, ԴՊՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐՈՒԵՍՏՔ ԵՒ ՕՐԱԼՈՒՐՔ

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ — ՏՆՕՐԷՆ

ԵՐՈՒԱՆԴ ՏԷՐ-ԱՆԴՐԷԱՍԵԱՆ — ԲԻԶԱՆԴ Մ. ՊՕԶԱՃԵԱՆ

Գ. ԾՐԶԱՆ — 1900 ՅՈՒՆՈՒԱՐ 8 — ԹՎԻ 77

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Բացատրութիւն մը.— Շաբթուան տօնը. — Ճառերը.— Ուղղամտութիւն ամէն բանի մէջ։

«Հանրագիտակ» ամէն շաբաթ հարկ կը տեսնէ ընդհանուր ակնարկ մը արձակել ազգային գործոց վրայ, մատնանիշ ընել պէտքերը, ցոյց տալ օգտակարը, գովել գործունէութիւնները։ Շատեր թերեւս շաբաթաթերթի մը, որ գրական ըլլալու առաւելութիւնն ալ ունի, աւելորդ նկատեն այսպիսի տեսութիւնները. մեք այդ կարծիքէն չենք. կը փափաքինք մեր ազգայիններուն կեանքը պատկերացած տեսնել մեր Հանդէսին մէջ։ Պէտք է մեր ընթերցողներուն միտքը լեցուի շարունակ Պատրիարքարանի գործառնութեանց պատմութեամբ։ Ասկէց աւելի շահեկան գործ չի կրնար ըլլալ։ Շաբաթները շուտով կը սահին, և մեր ընթերցողք միշտ կ'ունենան իրենց ճաշակին յարմար նիւթեր մեր Հանդէսին մէջ։ Կան որ բնաւ չեն ախորժիր գիտական լուրերէ, բայց ո՞վ կընայ ուրանալ գիտական, արհեստական տեղեկութեանց կարեւորութիւնը. կամ գրական ժամանցքի մը հարկը։ Հանդէս մը լոկ գրական, լոկ գիտական, լոկ ազգային ընել, տակաւին ո՛չ մեր գործունէութեան սահմանին մէջ է այդ և ո՛չ ալ մեր ժողովրդեան ճաշակին մէջ։ Թող որ մեր կարծիքով, ինչպէս վերը բացատրեցինք, մեր սկզբունքն այն է որ ընթերցողք ապրին տոհմային կեանքի երեւոյթներուն մօտ ու հետ։ Իրաւ է որ ամէն ատեն շահագրգիռ նիւթեր պատրաստ չունինք ի վայելս մեր ընթերցողներուն, բայց օրըստօրէական կեանքին հաշուեկշիռը ներկայացնել՝ հանրային մարդոց կամ հրապարակագիրներու պարտականութիւնն է։ Մեք այսպէս ըմբռնած ենք մեր դերը, և ուրախ ենք որ մեր ընթերցողք, կամ անոնց մեծագոյն մասը, կարծակից են մեզ։

Շաբթուան նորութիւնն են պատրիարքարանի մէջ Նոր Տարւոյ և Ս. Ծննդեան տօնին առթիւ կատարուած ընդունելութիւնք, խօսուած ճառերը Պատրիարքարանի Դահլճին մէջ, խօսուած

քարոզները մեր եկեղեցիներուն բեմերէն։ Ուրախառիթ պարագայ մ'էր որ մայրաքաղաքիս բոլոր թաղերը, դոյզն բացառութեամբ, ունէին իրենց քարոզիչները, որք ոգեւորութիւն ընծայեցին արարողութեանց, և բարեպաշտ ժողովրդեան ջամբեցին հոգեկան հացն ու կրօնի մխիթարութիւնը։ Մեր ժողովուրդ միշտ հոգեկան կամ կրօնական մխիթարութիւններով կազդուրուած է։ Ցնտեսական տագնապներու յաջորդող տարիները կրնային իրաւամբ շատ տխուր և ընկճող ազդեցութիւն ընել մեր ժողովրդին վրայ, բայց հո՞ն էր կրօնքը, իր սրտին մօտիկ, իր սրտին ազդող ներշնչող կրօնը՝ որ քաջալերեց, մխիթարեց զայն։ Մարմնեղէն տառապանքներուն, տնտեսական պարագայից հետեւանօք նուազկոտ ոյժերը կը կազդուրուին կրօնական անուշիկ խօսքերով, քարոզչին երեւակայութեամբ, որ իր ունկնդիրները կ'առնէ կը տանի հոգեկան բարձրութեանց կատարը՝ ու վերէն վար նայել կուտայ անոնց երկրաքարշ ստորնութեանց վրայ, ու միակ ճշմարիտ վայելքը նկատել կուտայ երկինքը, շատ բարձր, հաստատուն երկինքը, որ լուսաւորներով կը ճաճանչէ գիշեր ցերեկ։ Այսպէս ի՞նչ անոյշ է քարոզել հոգեկան բարձունքներու վրայ։ Մարդ պահ մը կը մոռնայ ինչ որ անցած կամ անցուցած ունի, աչքերը կը սեւեռէ անտեսանելին ըմբռնելու, ապագայ մխիթարութեան յոյսեր, նշոյլներ քաղելու համար այդ ակաղձուն ծառէն, որ երկնից ճակատը տնկուած է իբրեւ միակ ապաւէն անկեալներուն, հոգւով ոգեւորներուն և ըստ աշխարհի տառապողներուն համար։

Ահա այսպիսի եօթնեակ մը բոլորեցինք։ Հաւատքով ապրեցանք շաբաթ մը, և հաւատքը մխիթարեց զմեզ, աղքատը կազդուրուեցաւ, անկեալը սիրեց ու պնդեց յուսալ և մեր հոգին անհունին դաշտերուն մէջ սաւառնելով։ Գոնէ երեւակայեց անվախճանը՝ որ բաղձանքներն յաւիտենական կ'ընէ ու ամենէն տխուր կեանքն ալ տանելի կ'ընէ, լաւագոյն կրօնական ապագայի մը յուսով։

Գեղեցիկ եօթնեակ, զոր պիտի վայելենք նաեւ Բարեկենդանի շաբթուն, տոհմային սուրբերուն յիշատակաւն ու հոգեկան մխիթարութիւններով։ Եկեղեցին այսպէս կը տանի յաղթանակը, և մեք իրաւունք կ'ունենանք կրկնելու թէ մեր եկեղեցին պէտք է սիրենք և զայն զօրացնենք բանաւոր և ուղղամիտ միջոցներով։

Ի դիմաց Ժողովոյ և Ի դիմաց Ազգ. Վարչութեան, Գուրգէն էֆ. և Յակոբ փաշա խնդակցութիւն յայտնեցին Ս. Պատրիարք Հօր, ձեռք բերուած արդիւնքներուն վրայ։ Աւանդական էին այդ ճառերը, որք այս տարի սակայն խմբագրուած էին նուաղ պայմանագրական ոճով և շեշտերով։ Յակոբ փաշա և Գուրգէն էֆ. զիրար գերազանցելու փափաքով փութացին։ Սրբազնութեան մատուցանել ազգովին գոհունակութիւն և. Ն. Սրբազնութիւն իր սովորական ոգեւորութեամբ պատասխանեց՝ կրկնելով գրեթէ ինչ որ առեն առանք կը ջանային հասկցնել։ Նոր Տարւոյ և Ս. Ծընընդեան բարեմաղթութիւնք այս տարի աւելի տաքուկ մթնոլորտի մը մէջ կատարուեցան։ Կիլիկիոյ Կաթուղիկոսին ընտրական գործողութիւնք աւարտելու մօտ են, ինչպէս յայտարարեց Ս. Պատրիարքը, և այդ յայտարարութիւն բնականաբար կշիռք ունի, քանի որ պաշտօնապէս Ն. Սրբազնութիւնն է որ կ'ընէ զայն։ Ս. Պատրիարքը գեղեցիկ նորութիւն մը բերաւ Պատրիարքարանի մէջ, ամէն տարի հանդիսաւոր առիթներուն իր պաշտօնավարութեան տեսակ մը հաշուեկշիռը տալով ներկայացող բազմութեան։ Հոգեբան Պատրիարք մ'է Ն. Սրբազնութիւն. բնականէն հետաքրքիր մարդ, ուրիշներուն հետաքրք-

ջութենէն ալ կը հասկնայ և ըստ այնմ կը խօսի։ Գործնական չըլլալն ամէն ժամանակ թերութիւն մը պէտք չէ նըկատուի, քանի որ պարագայք են որ կ'որոշեն, կը վճռեն մեր ընելիքը։

Բայց բոլոր ճառերէն և անոնց տրուած պատասխաններէն վեր առաքինութիւն մը կայ, այն է ուղղամտութիւն ամէնուն կողմէ։ Եթէ ուղղամտութիւն կամ ժողովրդային բառով անկեղծութիւն գտնուի գործերու և զայնս պատմելու եղանակին մէջ, արդէն իսկ նպատակի մը կէս ճամբան կոխած կ'ըլլանք։ Առանց նախապաշարումի ըսենք պէտք եղածը, և պէտք եղածը ըսենք, դարձեալ նոյն անկեղծութեամբ։ Զիրար հասկնալու ամէնէն դիւրին միջոցն է այս։ Անձնուիրութեան հետ եթէ անկեղծութիւն և ուղղամտութիւն՝ալ զուգորդած ըլլանք՝ այն ատեն կը հասնինք մեր նպատակին, որ է օգտակար ըլլալ հասարակութեան։ Ուրիշներէն սպասել որ մեր գործերն ուղղամտութեամբ դատեն՝ կ'ենթադրէ անչուշտ որ մեք ևս նոյն ուղղամտութեամբ շարժինք մեր գործառնութեանց մէջ։ Բարոյականի տարրական սկզբունքն մ'է այս զոր պէտք է յարգել գիտնանք։ Ուղղամտութիւնը ճառերէն շատ վեր է, ինչպէս նաև պատասխաններէն, որոց հիմը պէտք է կազմէ։ Այդ ուղղամտութիւն, այդ առաքինութիւն կայ, կը յուսանք, խօսուած ճառերուն և տրուած պատասխաններուն մէջ։

ՀՄԷՃԷԼԼԷ

ՕՍՄ. ՔԱՂ. ՕՐԻՆԱԳԻՐՔ

Սոյն օրինագրքին հայերէն թարգմանութիւնն և թուրքերէն արտասանութիւնը դէմ առ դէմ հրատարակուած են, հինգ հատորներու մէջ ամփոփուած։ Իւրաքանչիւր հատորի գինն է 10 ղրուշ։ 5 հատորն ի միասին առնել ուզողին համար 40 ղրուշ։ Կը ծախուի բոլոր գրավաճառներուն քով։ Գաւառներէն եթէ 45 ղրշի փոստայի բուլ ղրկուի Հանրագիտակ»ի Տնօրէնութեան, փոստայով կը ղրկուի յանձնարարեալ ծրարով։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՒՐՈՊԻՈՅ

ՏԵՂԱՅԻՆՔ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ։—Խորհրդանշական մշակութիւնն իսկ կարդադրուած էր աւանդութեամբ։ Երեսփ. Ժողովը կ'ընտրուէր ո՛չ թէ ուղղակի ազգէն, այլ տեղային առանձնաշնորհեալ մարմիններէ։ Այս կերպով կեղր. կառավարութիւնն յարակցութիւն ունէր տեղային հաստատութեանց հետ։

Անգլիոյ մէջ տեղային իշխանութիւնք անկանոն կերպով կազմաւորուած էին, և դասական դարձած կարծեաց հակառակ, կարծուածին պէս զօրաւոր չէին։ Անգլիոյ այնքան պանծացեալ ինքնակառավարութիւնը (self-government) կը սահմանափակուէր նախկին քաղաքներու և առանձնաշնորհեալ վաղեմի աւաններու մէջ, զորս կը մատակարարէր ժառանգական քաղքենիներէ ընտրուած թաղական տեղական հինաւուրց ընկերակցութիւն մը։ Բայց երկրին բոլոր մնացեալ մասը—բոլոր գիւղերը ու բոլոր նորահաստատ քաղաքները—ընտրուած ո և է տեղային վարչութիւն չունէր։ Հոն տեղային գործերը կը կարդադրուէին վէստրիներու (թեմական կամ թաղական խորհուրդներ) և ջրջուորտրնսներու (եկեղեցական) կողմէ, որոց վրայ կ'իշխէին թեմին հովիւն և գիւղին աւատապետը։ Երկրին հարուստներուն (ազնուականներուն, կղերին, գործարանատէրներուն) մէջէն կառավարութեան ձեռամբ ընտրուած հաշտարար դատաւորնե՛ր էին որ ձրիապէս կ'ստանձնէին ոստիկանութեան, տուրքերու բաշխման, և արդարութեան (դատաւորութեան) պաշտօնները, երբեմն առանձին գործելով և երբեմն ալ ի միասին խորհրդակցելու համար նիստ գումարելով։ Իւրաքանչիւրը տէր մ'էր իր գաւառին մէջ, անսահման իրաւասութեամբ, բայց սովորական դատարաններ ալ կային։

Իւրաքանչիւր կոմսութեան (նահանգ) համար կար նաև շերիֆ մը (կառավարութեան պաշտօնական ներկայացուցիչ) և Լորա-Լէֆթենէնդ մը (հրամատար քաղաքապահ գինուորութեան) որք կ'առնուէին երկրին մեծ ալուածատէրներուն մէջէն, բայց որոց պաշ-

ասոնն իրական չէր։ Անգլ. վարչութեան ինքնատիպ հանգամանքն էր «թոշակաւոր» պետական պաշտօնատարներ չգործածելը։ Բոլոր աշխատութիւնը պէտք էր ձրի կատարուէր երկրին երեւելիներուն կողմէն։ Բարձրագոյն Ատենի դատաւորները միայն թոշակ կ'առնէին պետութենէն, բայց ասոնց թիւն ալ սահմանափակ էր։ Միշտ մայրաքաղաքին մէջ կը գումարուէին, և այն աեն միայն դաւառները կ'երթային, երբ հարկ ըլլար եղեռնագործ դարպասներ (աեաններ) գումարել, այսինքն՝ երկրին երեւելիներէն ընտրուած երդուեալ դատաւորներու (jury) վրայ հրամայելու համար։ Տեղային մնայուն դատարաններ չկային։ Ուրեմն անգլ. ինքնավարութիւնը բուն իսկ երկրին կառավարութիւնը չէր, այլ երկրին կառավարութիւնն էր տեղային ազնուականներուն ձեռամբ։

ԸՆՏՐԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆ.—Տեղային մարմիններ՝ էին որ երեսփոխաններ կը ղրկէին հատարակաց խորհրդարանին (chambres des communes) որ եօթն տարուան համար կ'ընտրուէր։ Երեք տեսակ տեղային մարմիններ կային. կոմսութեանց ժողովները (186 երեսփոխան), աւաններու ընկերակցութիւնք (467 երեսփոխան) և համալսարանք (5 երեսփոխան)։ Ընտրական շրջանակներ չկային, այլ առանձնաշնորհեալ մարմիններ, շատ անհաւասար կերպով բաշխուած, առանց համեմատութիւն ունենալու ո՛չ ժողովուրդին հետ և ո՛չ ալ երկրին հետ։ Սկովտիա 45 առանձնաշնորհեալ մարմիններ ունէր. Կալլէսի երկիրը՝ 24, Իռլանտա, որ 1800ին միացուած էր Անգլիոյ, 100 առանձնաշնորհեալ մարմիններ ունեցաւ։ Բուն Անգլիոյ մէջ, առանձնաշնորհեալ աւանները կը գտնուէին մանաւանդ հարաւ-արեւելեան մասին մէջ, Լոնտոնի շրջակայքը։ Հարաւային 10 կոմսութիւնք 237 երեսփոխան ունէին. միւս 30 կոմսութիւնք՝ 252 երեսփոխան. Քորնուայ՝ 44 (Սկովտիոյ չափ)։ Այս մարմիններէն մեծ մասն ունէ քաղաքական կեանք չունէին։ Անգլիական 34 աւաններ՝ փտած աւաններ (bourgs pourris) էին, այսինքն լքուած նախկին գիւղեր։ Պրաքղէն մէկ տուն միայն ունէր, Տընուիչ դարերէ ի վեր ջուրին տակ էր. Կաղէն այլ ևս լոկ պարտէզ մ'էր)։ Ուրիշ շատ մը աւաններ ալ 50 ընտրող միայն ունէին։ Ասոնք «զրպանի» աւաններ կը կոչուէին։ Բոլոր տունները կը վերաբերէին մէկ կալուածատիրոջ որ իր վարձակալներուն մատնանիշ կ'ընէր ընտրուելիք երեսփոխանները։ Այսպէս կալուածատէրն իր աւանին երեսփ. աթոռները կը վարէր իբրև կալուած մը. կը պարզեւէր զանոնք կամ կը ծախէր։ Ուրիշ աւաններ ալ կախում ունէին կառավարութենէն, որ նախարարութեան ձեռքին տակ ունեցած մարդիկն ընտրել կուտար։ Կը հաշուուէր թէ 658 երեսփոխաններէն 424ը կանխաւ կը նշանակուէին նախարարութենէն, կամ 250 տանուտէրներէ։

Անգլ. կոմսութեանց ժողովները, և մէկ քանի խոշոր աւաններու ընկերակցութիւնները միայն բաւական բազմաթիւ ընտրողներէ կը բաղկանային, ընտրական ճշմարիտ շրջանակ մը կազմելու համար։ Շատ անգամ ալ ընտրութիւն կատարելու գործը զանց կ'առնուէր։ Ընտրելիները հռչակելու որոշուած օրն, ընտրելիներ չէին ներկայանար, այլ արդէն իսկ ընտրուած երեսփոխաններ ոչք երկրին խոշոր անձնաւորութիւններն էին։ Կառավարական ներկայացուցչին կը բաւէր ընտրուած հռչակել զանոնք։ Այս տեսակ ընտրութիւն մը կը կոչուէր «անվիճելի»։ Ընտրութեանց մեծագոյն մասն այսպէս կը կատարուէին։ Սովորաբար, 50էն աւելի «վիճելի», այսինքն ճշմարիտ ընտրութիւններ չկային։ 1818ին ընտրական պայքարն շատ սաստիկ եղաւ, վասն զի 100 վիճելի ընտրութիւնք կային։ Սկովտիոյ բոլոր կոմսութեանց մէջ ընդամենն 3,000 ընտրողներ միայն կային։ Պիւդի կոմսութեան մէջ (14,000 հոգի, 21 ընտրող) կը պատմուէր ընտրութիւն մը ուր մէկ ընտրող միայն եկած էր. ինքնիրեն ընտրողական ժողով կազմեց, կոչում ըրաւ, ինքն իր անունն պատասխանեց, ինքզինք նախագահ ընտրեց, իր ընտրութեան ի նպաստ խօսեցաւ, իր անունը քուէի դրաւ և ինքզինք միաձայնութեամբ ընտրուած հռչակեց։ Վէճի նիւթ եղած ընտրութիւնը կը կատարուէր անբարեկարգ ու հին ձեւերով։ Բացօթեայ խմբուած ընտրողական ժողովին առջեւ, կառավարական ներկայացուցիչը միտ մի կը ներկայացնէր ընտրելիները, և ամբոխն իւրաքանչիւրին վրայ աղմկալի ծափահարութիւններով կը քուէարկէր ձե-

ռամբարձ. ճշմարիտ ընտրողներն ոչ-ընտրողներու հետ խառն ի խուռն ձեռք կը վերցընէին։ Կարծես թէ քուէարկութեան կատակերգութիւն մ'էր։ Զընտրուող ընտրելին իրաւունք ունէր անուանական քուէարկութիւն պահանջելու։ Այն ատեն կը սկսէր ճշմարիտ քուէարկութիւնը։ Տոմար մը կը բացուէր, ուր մէն մի ընտրող կ'երթար կ'արձանագրէր իր քուէն։ Այս գործողութիւն կրնար շաբաթներ տեւել. բնակիչը չահունէին զայն երկարաձգելու մէջ, վասն զի մրցման առիթ ընծայող ընտրութեանց մէջ, քուէներու գնման գինը միշտ կը բարձրանար։ Քանի որ քուէն հրապարակային էր և տոմարի մը վրայ կ'արձանագրուէր, ընտրելիները կրնային պարբերաբար գնել քուէները՝ կամ ընտրողներուն աչքը վախցնել։ Գնումը դաղտնի չէր կատարուեր, այլ բացայայտ։ Եղած են նաւաններ որք իրենց երեսի. թոռն իվաճառ հանած են։ Աւաններու բոլոր կալուածատէրներն իրենց քուէն կը թելադրէին բընակիչներուն որք իրենց վարձակալներն էին։ 1829ին. Նիւ-Ըրքի մէջ, Նիւ-քեասլի կոմսը 387 վարձակալ ճամբեց, վասն զի ասոնք համարձակած էին անոր մրցակցին ի նպաստ քուէարկել։ Երբ երեսփոխանական ժողովս մէջ դանգատ եղաւ այս բանին դէմ, դուքսը պատասխանեց. «մթթէ իմ ստացուածքս ուղածիս պէս գործածելու իրաւունք չունի՞մ»։

Վարչապետ Բիդ երկչոտ բարեկարգութիւն մը առաջարկած էր, այն է փոխած (բնակիչներկ զուրկ) աւանները դնել իրենց տէրերէն, բայց չկրցաւ քուէարկել տալ զայն։ Ընտրութիւնք վաճառելի մնացին, և չտես նորափարթամներ, սեղանաւորներ, ճարտարապետներ, Հնդկաստանէ հարստացածներ, («նապապ»յորջորջուած) խորհրդարանի անդամակցութեան պատիւը դնելու համար իրարու դէմ մրցելով՝ աւելի եւս բարձրացուցին գիները։ 1814ին, երեսփ. թոռներուն մեծ մասն այլեւս ժառանգութեամբ կամ գնմամբ ստացուած սեփականութիւններ էին։ Երեսփ. ժողովն երեւութապէս միայն ներկայացուցիչ ժողով մ'էր. ազգին ստուար զանգուածէն անկախ, տանուտէրներու և միլիոնատէրներու ժողով մ'էր։ Ազնուականութի՛ւնն էր տիրող տարրը։ Խորհրդարանական դրութիւնը ներկայացուցչական կառավարութիւն մը չէր, այլ ոլիգարշական (oligarchique) կառավարութիւն մ'էր։

ԵԿԵՂԵՑԻՔ. — Եկեղեցւոյ կազմակերպութիւնն ալ շատ կնճռոտ էր։ Առանց հաշուելու աղանդները, Միացեալ-Թագաւորութեան մէջ երեք Եկեղեցիներ կային, որոցմէ իւրաքանչիւրը կը տիրապետէր երեք երկիրներէն մէկուն մէջ, Անկլիքան Եկեղեցին՝ Անգլիոյ մէջ, Երիցական Եկեղեցին՝ Սկովտիոյ մէջ և Կաթոլիկ Եկեղեցին՝ Իռլանտայի մէջ։ Բայց ասոնցմէ երկուքը միայն պաշտօնապէս ճանչցուած էին, Անկլիքան Եկեղեցին իբրեւ Պետական Եկեղեցի Անգլիոյ, Երիցական Եկեղեցին իբրեւ Պետական Եկեղեցի Սկովտիոյ։ Կաթոլիկ եկեղեցին օրինապէս արգիլուած էր, և միայն իրապէս թոյլատրուած (tolérée)։

Պետական Եկեղեցին միայն պաշտօնապէս ճանչցուած, պաշտպանուած և թոշակառու էր։ Կառավարութիւնը, 1688էն ի վեր, այլաղանդներուն հետ հաշտուած, թոյլտուութիւն չնորհած էր անոնց, բայց առանց ջնջելու ա՛յն օրէնքներն որք Պետական Եկեղեցին պարտաւորիչ կ'ընէին։ Ո և է պաշտօնի կամ հանրային մարմնոյ մէջ մտնելու համար, դարձեալ հարկ էր հաւատարմութիւն ցոյց տալ Անգլիկան Եկեղեցւոյ, անկլիքան ծէսին համաձայն հաղորդութիւն առնելով։ Այլաղանդները, շարունակելով յաճախել իրենց մատուռները, յանցանք մը կը գործէին, պատժոյ կ'ենթարկուէին։ Այդ պատիժներէն զանոնք ազատագրելու համար, մասնաւոր օրէնք մը պէտք էր, զոր նախարարութիւնն ամէն տարի նոր ի նորոյ քուէարկել կուտար խորհրդարանին։ Կառավարութիւնը կը թոյլատրէր այլաղանդներուն (ոչ-անկլիքաններուն) կատարել իրենց պաշտամունքը և իրենց դպրոցները պահել իրենց ծախքով, բայց անհաստատ թոյլտուութեամբ մը և ո՛չ թէ իրաւունքի մը զօրութեամբ։

Կաթոլիկ կրօնն այս թոյլտուութիւնն իսկ չէր վայելեր, օրինապէս արգիլուած կը մընար։ Անկլիքան ծէսին համաձայն հաղորդութիւն առնելու և 1683 Երդման Օրէնքով (bill of test) պարտաւորիչ դարձած երդումը տալու պարտականութիւնը կը բաւէր

արդիլել ոչ է կաթոլիկի որ պաշտօնի մը կամ ընկերակցութեան մէջ մտնէ։ Ճարճ Գ. երկիցս մերժած էր իր նախարարներուն՝ կաթոլիկներ ընդունիլ իր անձնապահ սպաներուն մէջ։

Անկլիքան Եկեղեցին կը պահէր իր եկեղեցական ատեանները (դատարանները) որոց առջեւ կը դատուէին ոչ միայն եկեղեցական կարգապահութեան վերաբերեալ դատերը, այլև ամուսնալուծութեան, հարազատութեան, կըտակներու վերաբերեալ աշխարհային դատերը։ Քաղաքային հանդամանքներու տոմարը (Etat civil) ինք կը բռնէր, այսինքն՝ ամուսնութիւնները կը գրէր, ծնունդներն ու մահերը կ'արձանագրէր։

Իր բոլոր առանձնաշնորհումներն ու հասոյթները կը պահէր։ Իր եկամուտները կը բաղկանային իր կալուածներուն հասոյթներէն, պետական նպաստներէ, և բոլոր հաւատացեալներէն, այսինքն՝ բոլոր բնակիչներէն (այլադաւանդներն ու կաթոլիկներն ալ ի միասին) առնուած պարտաւորիչ տասանորդէ մը, վասն զի ամէն բնակիչ Պաշտօնական Եկեղեցւոյ անդամ կը համարուէր։ Իր նախկին նուիրապետական դասակարգութիւնն ալ անփոփոխ կը պահէր։ Իրապէս, եկեղեցականք սովորաբար ազատորդի մարդիկ էին, որք իրենց պաշտօնին եկամուտներով կը շարունակէին վարել ազնուականի (gentlemen) կեանքը, որսի երթալով և ձի հեծնելով, հաշտարար դատաւորի պաշտօն ի գործ դնելով և իրենց ընտանիքը ապրեցնելով։ Շատերը մինչեւ իսկ իրենց թեմերուն մէջ չէին բնակեր, այլ փոխանորդ մը կը կարդէին, իրենց եկամուտներուն մէկ փոքր մասն անոր յատկացնելով իբրեւ թոշակ։

Սկովտիոյ Եկեղեցին կը պահէր (և դեռ կը պահէ) դաշնաւորական կազմութիւնը, որ երաշխաւորուած է 1707ի Միութեան Դաշնագրով։ Մէն մի թեմ կամ վիճակ կը կազմէ մարմին մը, զոր կը կառավարէ Հովիւը, աշխարհական անդամներու հետ։ Քանի մը թեմեր ի միասին կը կազմեն երիցաժողով մը (presbytery), զոր կը կառավարէ բոլոր հովիւներէն և մէն մի թեմէ մէկ աշխարհական անդամի բաղկացեալ ժողով մը։ Մէկ քանի երիցաժողովներու անդամներուն համադումար ժողովը կը կազմէ Թեմական Սինոդ մը։ Վերջապէս, այս նուիրապետութեան գլուխը կը դառնայ եկեղեցական ժողով մը, որ մէն մի երիցաժողովի, իւրաքանչիւր աւանի և իւրաքանչիւր Համալսարանի պատուիրակներէն կազմուած է եւ Սկովտական եկեղեցւոյ մէջ գերագոյն իշխանութիւնն է։ Այս բոլոր ժողովները կարգապահական (պատժական) ատեաններ են, իշխանութիւն ունենալով դատել հովիւներուն ու հաւատացեալներուն հաւատքն և անհատական վարմունքը։ Երիցաժողովն որ հովիւները կ'անուանէ, գործնականապէս ամենէն հզօր իշխանութիւնն է։

Սկովտական Եկեղեցին, ԺԸ. դարուն մէջ, շատ խստութիւն ցոյց տուած էր հաւատացեալներուն ներքին կեանքին վերաբերեալ գործերու մէջ, բայց կառավարութիւնն և աշխարհական (քաղաքային) դատարանք մասնաւորներու վրայ զսպողական իշխանութիւն մը ի գործ դնելու իրաւունքը զլացան անոր, եւ վերջապէս պարտաւորեցին զայն իր կրօնական գործերով միայն զբաղելու։ Սկովտական եկեղեցւոյ հասոյթները կը բաղկանային տասանորդներէ, պետական նպաստէ և գրեթէ կիսով չափ ալ մասնաւոր նուիրատուութիւններէ։ Սկովտական Եկեղեցին ազատ մնացած ըլլալով, կանոնաւորապէս թոշակ չէր վճարեր իր անդամներուն, բայց գոնէ Անկլիքան Եկեղեցւոյ պէս, ո՛չ անհաւասարութիւն ի գործ կը դնէր հովիւներուն ունեցած հասոյթներուն միջեւ, եւ ո՛չ ալ եկեղեցական պաշտօնները կը ծախէր։ Սկովտական կղերն աւելի անկախ և աւելի գործունեայ էր քան անկլիքան կղերը։

(Շարունակելի)

ԾԱՆՕԹ. Ա.— Սկզբնաւորութիւնը տե՛ս «Հանրագիտակ»ի Ա. թուոյն մէջ։ Ամէն թիւերու մէջ շարունակուած է և պիտի շարունակուի բովանդակ Եւրոպիոյ ժամանակակից Քաղ. պատմութիւնը։

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

ԾԱՂԻԿ ԵՒ ՊՏՈՒՂ

Ոչ է բոյսի կամ տունկի վերջնական նպատակն է սեռին շարունակումը։

Այս շարունակութիւն ապահովուած է ծաղկին միջոցաւ, որ կը պարունակէ արգասաւորման գործարանները, ինչպէս նաեւ պտուղին միջոցաւ, որ կը բովանդակէ հունաը։

Ծաղիկն արտաքուստ կը բաղկանայ 1. բաժակէն (calice) որ ընդհանրապէս կանաչ է եւ տերեւներուն բնութիւնն ունի. 2. պսակէն (corolle), որ յաճախ զարդարուած է փայլուն գոյներով։ Բաժակն ու պսակը յատկացուած են արգասաւորութեան գործարանները պաշտպանելու, որք սովորաբար ծաղկին կեդրոնը կը գրաւեն։ Այս գործարաններէն ոմանք որձ կամ արուեն (étamines) եւ ոմանք էգ (pistil) են։ Արուները թուով շատ փոփոխական են. սովորաբար կը բաղկանան երկու արոյ մասերէ։ ուրոյմէ մին թելի ձեւ ունի եւ կը կոչուի թելուկ, իսկ միւսը թելուկին վերի ծայրը հաստատուած փոքր քսակի մը ձեւն ունի, որ կը կոչուի «սերմնարան» (anthère)։

Եթէ արու գործարանները խնամով փրցնենք, կեդրոնը կը մնայ ուրիշ գործարան մը, էգ գործարանը, որ մէկ եւ կամ մէկ քանի երկայն պաքներէ (style) կը բաղկանայ։ Ասոնք իրենց վերին ծայրը կը կրեն «կնիք» (stigmate) կոչուած տեսակ մը փոքր կծիկ (pelote) եւ իրենց ստորին մասով ալ կը միանան սերմնարանին (ovaire, ձուարան)։ Երբ ծաղկի մը էգ գործարանը վերէն վար ճեղքենք, պիտի տեսնենք որ շատ մանր հատիկներ կը պարունակէ որք կը կոչուին ձուիկ (ovule)։

Երբ ծաղիկն աղէկ մը բացուած է, սերմնարանները կը բացուին եւ արգասաւորիչ փոշի մը (pollen, բեղնափոշի) դուրս կուտան։ Բեղնափոշիին մէկ մասը կ'երթայ կը հաստատուի էգ գործարանին կնիքին վրայ։

Բեղնափոշիին այս փոխադրութիւնը կը դատարուի զանազան կերպով՝ երբեմն պարզ անկումով, երբեմն արու գործարաններուն մէկ շարժումով, երբեմն ալ հովին կամ միջատներուն միջոցաւ, որք կարծես իբրեւ փոխադրիչ կը ծառայեն։

Միջատները, ինչպէս գիտէք, կ'այցելեն ծաղիկներուն, անոնց պսակին խորէն քաղելու համար շաքարահամ հեղուկ մը որ նեկտար (nectar) կը կոչուի։ Այս այցելութեան միջոցին, բեղնափոշին կը կառչի անոնց մարմնոյն, եւ միջատներն ապա այդ փոշին կը տանին մօտակայ ուրիշ ծաղկի մը որուն պիտի այցելեն։ Միջատներուն կատարած այս փոխադրիչ դերը շատ ծանօթ է։ Եւրոպոյ մէջ կան տեղեր, ուր մեղուներուն փեթակները շարժուն են, այսինքն՝ կրնան տեղէ տեղ փոխադրուիլ։ Հետեւապէս ի հարկին զանոնք կը փոխադրեն սեւ (տաճիկ) ցորեն (sarrasin) ցանուած արտերը, որպէս զի ծաղիկներուն մեծագոյն մասն արգասաւորուին։ Ուրեմն օգտակար է փեթակներ ունենալ մրգաստաններու մօտ։

Հովին կամ միջատներուն այս միջնորդութիւնը շատ անհրաժեշտ է, մանաւանդ որ բուսական ինչ ինչ տեսակներու մէջ, զոր օրինակ եգիպտացորեններուն վրայ, արու և էգ գործարանները թէեւ միեւնոյն տունկին վրայ կը գտնուին, բայց ուրոյն, զատ զատ ծաղիկներու մէջ, եւ թէ ուրիշ բոյսերու վրայ ալ, զոր օրինակ կանեփին վրայ, արու գործարան ունեցող ծաղիկները կը գտնուին սէկ տունկին վրայ եւ էգ գործարան ունեցող ծաղիկներն ալ ուրիշ տունկի մը վրայ, երբեմն ալ առաջինէն շատ հեռու։

Արգասաւորումն ի՛նչ կերպով ալ կատարուի, ձուարանը կը զարգանայ եւ պտուղի կը փոխուի (ոլոռն, խաղող, կեռաս, տանձ եւն.) բոյսերու տեսակին համաձայն։ Պտուղներուն հունները կամ կուտերը կը խաղողնան մինչեւ որ պտուղն հասունցայ։ Այս պահուն, եթէ գործը բնութեան թողունք, պտուղն ինքնին կը փրթի, հողին վրայ կ'իյնայ, եւ եթէ տեղը նպաստաւոր է, յառաջ կը բերէ մէկ կամ աւելի նոր տունկեր, նման անոր որմէ ինք սերած էր։

ՓՈՐՁ. — Պարտիզպանները բեղնափոշիի (pollen) միջոցաւ կրնան երփներանգ կամ գոյնզգոյն ծաղիկներ յառաջ բերել։ Մեք

ալ կրնանք այս տեսակ փորձ մը կատարել պատատուկի (գեղձ, volubilis, պօրու չիչէյի). երկու տունկերու վրայ։ Երբ ճերմակ ծաղիկ մը բացուած է, կտրեցէք ա-րու գործարանները, առանց դպչելու էդ գործարաններուն։ Յետոյ ուրիշ պատատուկի մը գունաւոր ծաղկին սերմնարանով (anthère) շօշափեցէք սպիտակ ծաղկին էդ գործարանը, այնպիսի կերպով մը որ կարմիր կամ մանուշակագոյն պատատուկին բեղնափոշին հաստատուի սպիտակ ծաղկին էդ գործարանին վրայ։ Այս կերպով ձեռք բերուած հունտն յառաջ պիտի բերէ սպիտակ պատատուկներ, կարմիր կամ մանուշակագոյն երիւնագիծերով (panache) պիտակաւոր։ Երիւնագոյն մեխակն ալ այս կերպով յառաջ եկած է։

ՊԱՐԱՐՏՈՒԹԵԱՆՑ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀԱՐԿԸ

Արդէն սովրեցանք թէ տունկերն իրենց գոյութեան անհրաժեշտ եղած նիւթերը կը քաղեն թէ՝ օդէն՝ իրենց տերեւներուն միջոցաւ, եւ թէ հողէն՝ իրենց արմատներուն միջոցաւ։ Ինչպէս դիւրին է ըմբռնել, շատ դժուարին պիտի ըլլար մեր արտերուն վրայ բարձրացող օդին կամ մթնոլորտին բաղադրութիւնը փոխել, կամ արգասաւորել, մանաւանդ որ անսպառելի քանակութեամբ կը պարունակէ ինչ որ անհրաժեշտ է բոյսերուն, մանաւանդ ընածուխ (carbone)։

Բայց խնդիրը բոլորովին կը փոխուի հողին համար, որոյ վրայ կրնանք դործել շատ ազդուապէս։ Ուրեմն, հողին միջոցաւ միայն պիտի կրնանք բարւոքել, աղնուացնել մեր բոլոր մշակութիւնները։

Մէկ քանի նիւթեր, ինչպէս «ազոդ, (բորակածին), «ասիտ ֆոսֆորիք» (փոսփորային թթու), «բօդաս» եւ «չօ» (կիր), անհրաժեշտ են բոյսերուն գոյութեան եւ դժբախտաբար ատոնք անսպառելի քանակութեամբ չեն գտնուիր հողին մէջ։ Ուրեմն մշակը կամ հողագործը պէտք է իր ուշադրութիւնը նուիրէ այդ նիւթերուն։

Վայրի բնութեան մէջ, երբ տունկ մը բուսած եւ հողին պարունակած բոլոր նիւթերը ծծած է, կը թառմի, կը սեռնի, եւ տեղւոյն վրայ կ'ինայ կը փտի։ Ուրեմն հողին ետ կուտայ ինչ որ անկէ առած էր։ Ա-ւելին իսկ կուտայ, վասն զի իր բեկորներուն մէջ կը գտնուի ինչ որ իր տերեւներով քաղած էր օդէն։ այսինքն՝ ընածուխ եւ բորակածին։ Իսկ մշակուած բոյսերուն համար խնդիրը բոլորովին տարբեր է։ Օրինակի համար, երբ մեր ցանած ցորենը հնձենք, որոյ կապենք, եւ ջայլուր, այսինքն մեր կոլորաները փոխադրենք, հողին չենք վերադարձներ ինչ որ ցորենը քաղած էր հողէն։ Հունձքէն ետք, հողը կորսնցուցած է այն բոլոր նիւթերը զորս ցորենն իրմէ փոխառած էր, աճելու եւ մեծնալու համար։ Ուրեմն պէտք է որ այդ նիւթերը նորէն հողին ետ տանք, ապա թէ ոչ պիտի գայ ժամանակ մը ուր հողն այլեւս տալու բան մը պիտի չունենայ եւ ամուլ, անբերրի պիտի դառնայ։ Ուստի հողն ազրել ուրիշ բան չի նշանակեր, եթէ ոչ վերահաստատել անոր սպառած զօրութիւնը։

Արջառներն այն ատեն միայն աղնիւ եւ ընտիր արտադրոյթ կուտան, երբ լաւ սնած են, ոչ ոք կը տարակուսի ասոր վրայ։ Օրինակի համար, լաւ սնած կով մը ընտիր եւ առատ կաթ կուտայ։ Բայց ինչ որ տակաւին ընդհանրապէս ի նկատ չէ առնուած, (մեր երկրին մէջ մանաւանդ), սա՛ է թէ բոյսերուն համար ալ նոյն բանն է։ Բոյսերն այն ատեն միայն դեղեցիկ եւ առատ հունձք կուտան, երբ ա՛յն հողին մէջ ուր կը մշակուին՝ բաւական քանակութեամբ կը գտնեն իրենց գոյութեան անհրաժեշտ նիւթերը, այսինքն՝ յարմար ազրեր։

Մէկ խօսքով, պէտք է որ հողերն ազրաւորուած ըլլան բոյսերուն համար, ինչպէս որ մսուրը խոտակուտ լցուած ըլլալու է արջառներուն համար։ Ահա հո՛ս կը կայանայ բովանդակ հողային գիտութեան հիմը, խարիսխը։

(Շարունակելի)



ԱՆԳՈՒԹ ՄՂԶԱՒԱՆՋԱ

(Վ. ԱՇՐԿԵՆԱՎԷՊ)

Հո՛ւ, հո՛ւ, հո՛ւ . . . հովը կը հեծէր ընդ-հատ ընդհատ հիւսիսի թոքերէն։

Մթընշաղին մօտիկ, սոսկալի կերպով աղ-տոտ այդ օդին, կը տարուէ՛ր դիակ հապ-շտապ՝ քանի մը սինքոր մարդերու ուսն ամ-բարձիկ։

Մեռա՛ծ էր։

Բայց ինտո՞ր մեռած, քանի որ կ'զգայի դեռ հին սառուցիկ չեչաը այն ձայնին որ մէ՛կ չունչով հոգիս ճրագը մարեցուցեր էր։

«Ափսո՛ս, չի կրնա՛մ պիտի քեզ սիրել . . . »

Ու ինտո՞ր մեռած, քանի որ լսելիքս կը կոկծար այն խորթ հայհոյիներէն՝ զոր ինծի ձրի տանողները անպատկառ կը մռլտային հիմայ դժգոհանքէ աքցանուած ակռաներնուն մէջէն։

Անոնց անձնիւր քայլին կը ցնցուէր փայ-տացած ճիտիս ճոթը խեղճ դանկս ալ՝ ան-բարբառ հաւանութեան մը լեղիով։

Խունկը ածխացած էր շլթան աւրուկ բուրվառին զոր ատեն ատեն կ'երերցնէր քթան մօրուք տէրտապան, դէմքը ծամա-ծուռ ու շրթունքը կզպուած։

Կը տեսնայի ցեցոտ խարխլած պատգա-բակիս վերեւէն, չա՛տ մօտէն, խոնջ թեւա-ծումը սեփսեւ ադռաւներու որոնք փոսիս գիշերը կ'երդէին ականջս ի վար, աղմուտ, անյագ փոսի . . . ։

Ո՛չ մէկ յուղարկաւոր եռեւէս, բաց ի եր-կու կիներէ, որոնք սուգի կապը ճակատնին ու լացի թացը կոպերնուն ծայրը սարառուն՝ կը քալէին գլխիկոր՝ ճաղիս երկու դիէն։—Մայ-րիկս մէկը, միւսն ալ այն էակը որ անէա-ցուցե՛ր էր զիս իր լեզու—Նդրակին մէ՛կ դպչումովը անողոք,

«Ափսո՛ս, չի կրնա՛մ պիտի քեզ սիրել . . . ։»

Երկու կիներ թափորիս ընկերացող, ու մի՛ւս-ը մանաւանդ։ Ա.յսչափը բաւ և չա՛տ էր սր-դէն յաւիտենի մրափս չարունակելու անխը-ռով, և ա՛լ արփաւէտ նկատելու անսահման դանդիւը դամբանիս։

Բայց ճամբան չէր հատներ, ու ցաւոտ ձայնով մը հովը (չիկայ) կը հեծէր դեռ հիւսիսի թոքերէն, ընդհատ ընդհատ պատմելով ինծի մահաչուք արտմութիւնը այս ձմեռ իրիկու-նին, հո՛ւ, հո՛ւ, հո՛ւ . . . ։

. . . Արտքիլով կը բանամ աչուքներս ու ինքզինքս կը գտնեմ անկողնիս մէջ կպկըտած, վերմակը վրայէս ստհած ըլլալուն աղուոր մը մնած, անդին ալ բարի անո՛ւշ մայրիկս ջեր-մոցը վառելու զբաղած, ձեռքի փքոցովը հը-բահրելով կրակը չարունակ,

Հո՛ւ, հո՛ւ, հո՛ւ . . . ։

ԹԷՈԴԻԿ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

ԶՕՆԵԱԼ ԱՌ Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՍՈՒԶԱԿՆ

«Ո՞վ, այր ասպետ կամ զինակիր,
Իշխէ սուզիլ այս վըհին խոր.
Նետեմ ոսկեայ բաժակ մ'ընտիր,
Կընեց արդէն զայն մութ որկոր.
Ո՛վ բաժակն ինձ կրկին ցոյց տայ,
Թո՛ղ պահէ զայն իրեն ընծայ։»

Խօսի արքայն, ու բարձունքէն
Անբաւ ծովուն վրայ կարկառուն
Ապառաժին՝ բաժակն անդէն
Նետէ յանդունդն այն շառաչուն։
«Կրկին հարցնեմ. ո՞վ յանդգնի
Սուզիլ խորոց մէջ այս խրթնի։»

Ու զինակիրք, ասպետք, շորս դին
Կանգնած, լըսեն, այլ կը լըռեն,
Ակնարկ մը տան վայրագ ծովին,
Ո՛չ ոք բաժակն ըղձայ իրեն.
Երրորդ անգամ հարցնէ արքայն.
«Զը կա՞յ մէկը սրտոտ այսքան։»

Լուռ կայ համայն, որպէս յառաջ.
Բայց դինակրաց երկչոտ խումբէն
Դուրս դայ մանուկ մը հեզիկ, քաջ.
Գոտի, լոդիկ նետէ վրայէն.
Ու արք, կանայք ամէն կողմէն
Վեհ պատանին ապշած դիտեն։

Եւ երբ կ'երթայ ի ծայր ժայռին
Ու կը նայի անդունդն ի վար,
Զդայուէր Քարիրդ մրմրոտդին
Զուրքն ընկլուզուած ծոցէն խաւար,
Փըրփրակուտակ, ու հեռուոր
Խուլ որոտման հանելով գոռ։

Ու անդ պղպջանք, զեռում, եփ, եռ,
Ու չառաչում կայ, զերդ երբ ջուր
Խառնի ի հուր, եւ մինչ յամպեր
Գոլորշաւոր ցայտէ փրփուր,
Ու ալիք անվերջ կուտին, իբր այն
Թէ ծով մ'այ ծնիլ կամէր ովկիան։

Վայրագ մոլուցքն հուսկ կը ցածնու·
Ձերմակ փրփրին մէջն յայտ գայ
Լայնափեռեկ փասլ մ'ահարկու,
Սեւ, անյատակ, դժոխոց ճամբայ·
Ու յորձնեռանդն ալեաց խուժան
Կուլ տայ կրկին վըհին բերան։

Դեռ չը դարձած պայքարն ալեաց,
Շուտ տղան յանձնէ զինքն երկնքին·
—Շըշուկ մ'ահի չուրջ փրսփրաց—
Արդէն մէջն է նա յորձանքին։
Կը փակուի վիհ քաջին վրայ
Խորհրդաւո՛ր·— ալ չերեւայ։

Ու հանդարտ է երես ջրին,
Խորքը միայն խուլ կը գոռայ·
Դողդոջ բարբառ լըսուի չորս դին·
«Վե՜հ պատանիդ, բարեա՜ւ զընա։
Ա՛լ եւս խուլ գոռայ անդունդ·
Դէտակն սմէնք կան սրտաթունդ։»

Թէ նետելով հոն թաղըդ ճոխ,
Ըսէիր· Զայն ինձ առբերող
Արքա՛յ լինի, կըրէ՛ գայն թող,
Վարձքիդ չէի՛ ես ցանկացող·
Ինչ որ վիրապդ իր մէջ ունի,
Չի՛ պատուեր զայն ողջ մէկ հոգի։

Ցորձանապտոյտ կոհակներէն
Խլուած քանի՛ նաւք գլորեցան
Հոն գահավէժ, այլ այդ չիրմէն
Լոկ ջախջախ ոսն ու կայմ դարձան։—
Ու ե՛ւս յըստակ միշտ, ա՛յ եւս մօտ
Լըսուի իբրու գոռ մ'ամպորոտ։

Ու անդ պղպջանք, զեռում, եփ, եռ,
Ու չառաչում կայ, զերդ ի հուր
Երբ խառնի ջուր, և մինչ յամպեր
Գոլորշաւոր ցայտէ փրփուր·
Մշտակուտակ ալիք ժայթքեն,
Որոտագոչ, մրռայլ ծոցէն։

Եւ ահա՛ թուխ փրփրակոհակ
Ծոցէն, ճերմակ իբրեւ կարապ,
Կ'երեւին վեր թեւ մ'ու ծոծրակ,
Ուժգին ու ժիր լուղալով յափ·
Ի՛նքն է, շարժէ ձեռքին մէջ ձախ
Բաժակն ի վեր, ժպտով մ'ուրախ։

Ու խո՛ր, երկա՛ր նա կը չընչէր,
Ու կ'ողջունէր լոյսն եթերաց·
Եւ բերկրաձայն ընկեր ցընկեր
Գոչեն· «Կ'ապրի՜, ո՛հ, չէ կորած·
Ջուրց յորձանքէն սպառնագին
Քաջն ազատեց ո՛ղջ իւր հոգին։»

Գայ, զայն ակուռքն ուրախ պատէ·
Կը խոնարհի յոտն արքային,
Բաժակն առ նա կը կարկառէ։
Արքայադուստրն իր հօր լըսին
Հրամանին՝ հրացայտ գինւով
Լընու զայն յորդ, ու դառնալով

Թագաւորին, «Կեա՛ց միշտ, արքայ,
Գոչէ մանուկն, հրճուի՛ նա որ
Վարդ լոյսին մէջ չունչ առնու տայ·
Բայց փարն ահե՛ղ· մարդ չըլլա՛յ որ
Ուզէ փորձել դիքն ու տեսնել
Ի՛նչ են մութով ահով ծածկել։

Կայծակնատոյզ հոսեցայ վար·
Ժեռուտ կողէ ուղխ մը յայնժամ
Ինձ դէմ ժայթքեց վայրենաբար·
Զոյգ հեղեղաց թափը գաղան
Խլեց զիս, պտուտքեց իբրեւ չընչան,
Դիմադրելու անբաւական։

Խարակ մ'ի վեր ցցուած խորքէն
Ջուցուց ինձ Տէր զոր կարդացի
Անձկութեանս մէջ ինձ ապաւէն·
Փութով խլեցին զայն գրկեցի,
Ձերծայ մահէն· բուռաք հոն ի վեր
Նաև բաժակն էին բռներ։

Թէ ոչ կ'լինար յանդատակ խոր,
Զի մթութեան մէջ ծիրանաբերեան
Տակս անդունդներ կային նոր նոր,
Եւ ունկան լուռ թէ և համայն,
Ոյլ դժոխարկոր վիհն անհամար
Զեռուն, վիշտ աչաց ցոյց տար։

Գալարներով անդ պժգալի
Կը զեռային խառնափնդոր
Գարշ, քսոմնատիւշ ու անճառնի
Զրկունք, կայտառք, նեանդ ահաւոր,
Ու սպառնագին ցուցնէր ակռան
Ժանտ շանաձուկ, ծովու բորեան։

Ու հոն կախուած կը մընայի
Զարհուրելի զգացմամբն այն
Թ' այդ խորքն առ իս չէր կարելի
Մարդ էակի հասնէր աչ, ձայն,
Տխո՞ւր մենութեան խուճապներուն,
Ճիւաղաց մէջ ե՛ս միայն խոհուն։

Ու սարսուռով կը խորհէի
Թ' այդ բիւր հրեշք կ[illegible]
Կ'շարժին կուգան լափել ինծի.
Ահեղ ցնորքիս մէջ բուռտին ջով
Զոր գրկէի՝ Թողի. բա՛խտս էր.
Բուռն յորձանքը նետեց զիս վեր։»

Արքայն, թեթեւ զարմացումով,
Ըսաւ. «Քո՛ւկդ է բաժակն, ու քե՛զ
Այս մատնին՝ալ թանկ գոհարով,
Եթէ կրկինս ուզիս, բերես
Ինձ լուր թէ ինչ ծածկէ արդեօք
Ծովուն ալուց խորագո՛յն գոգ։»

Արքայադուստրն, յուզուած, լսեց.
«Հա՛յր, դժնեայ խաղդ ըսա՛յ ալ բաւ»,
Ողոք բերնով հօրն աղերսեց.
«Այլոց չիշխածն ա՛ն քեզ ըրաւ.
Թէ չես դեռ գոհ, ասպետանիդ,
Օ՜ն, չիկնեցնէ՛ Թող պատանիդ։»

Կ'առնու գաւաթն արքայն արագ,
Զայն կ'արձակէ մէջ յորձանաց.
«Կրկին բերես թէ զայդ բաժակ,
Լինիս ընտիրն իմ ասպետաց,
Ու բարեխօսդ իբրեւ հարս քեզ
Դրկել այսօր իսկ կարող եմ»

Կորով մ'երկնի տիրէ հոգւոյն,
Փայլատակէ աչքը խիզախ.
Ցեսնէ չիկնի՛լը գեղուհւոյն
Ու ծոիլն ապա սրժգոյն նրբաղ։
Այդ խանդ վարձքին ի՞նչ, անա՜հ,
Գահավիժի ի կեանս ի մահ։

Եւ դարձդարձիկ ալեաց ամբոխ
Կը մրընչէ որոտաձայն.
Ամէնք ի վայր պլնուն ի դոգ.
Կուգան, կուգան կսկակք համայն.
Շառաչեն վար, չառաչեն վեր,
Հէք պատանին ետ չեն բերեր։

Թարգմ. Ռ. Ց. Պ. ՇԻԼԼԷՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Պատերազմը.— Անգլիա եւ Գերմանիա.— Ապագայ Դեսպանախորհուրդ մը. — Մտահոգութեան վայրկեանը.

Զօր. Պուլլը կամ իր օգնական Զօր. Ուօրքն Դուկէլայէ անցա՞ւ։ Ահա օրուան խնդիրն Անգլիոյ մէջ պատերազմական ճգնաժամի միջոցին։ Անցեալ եշ. իրիկուն եկած հեռագիր մը սա՝ չափ կ'ըսէր թէ Անգլիացիք բռներ են Դուկէլայի հարաւային եզերքը Բոդկիդըր Տրիֆդի (անց.ք. հուն) մօտ։ Բայց ենթադրելով իսկ թէ Զօր. Պուլլը պիտի յաջողի կամ յաջողեցաւ անցնիլ Դուկէլայէն, գործը չի լմննար ասով, Լէտիսմիթ չազատուիր ասով։ Իրաւ է որ ռազմադիտական մեծ շարժում մը կը համարուի Դուկէլայի անց.քը, բայց գետին երկու եզերքն անմիջապէս Պոէրք խրամներու մէջ ամրացած են, շարունակ կրակ պիտի ընեն Անգլիացւոց վրայ։ Այս վերջինք պիտի կրնա՞ն լուծեցնել Պոէրներուն թնդանօթները կամ մաւզէրները։ Կ'ըսուի թէ Զօր. Պուլլը այնքան ահեղաբար ամրացած դրեթէ 40,000 Պոէրներուն դի-

ծը պէտք է ճեղքէ որպէս զի Լէտիմի-թի օգտակար ըլլայ Դուկէլայի անց.քը։ Աննիբաղ մը որ ամբողջ Իտալիան կոտրեց անցաւ՝ այնքան ուշադրութիւն չդրաւեց որքան Պուլլը՝ քանի մը մղոն տեղ կըտրել անցնելու ջանքին մէջ։ Արդէն Պուլլերի վերջին շարժումն ալ անտարոյգ է։ Այդքան կարեւոր շարժումմը շուտով պիտի ստուգուէր. Անգլիոյ նախարարութիւնը պիտի փութար անհանգիստ ժողովրդին աւետել Դուկէլայի անց.քը, եթէ իրօք Պուլլը և Լուորը անցան անկէց։ Բայց վերջնական լուր չկայ այս մասին և Լոնտոնի պատերազմական պաշտօնատունը լռութիւն կը պահէ։ Լաւատես Անգլիացիք կ'ըսեն թէ յաճախ պատճառներ կան յետաձգելու յաջողութեան մը ծանուցումը։ Սակայն յոռետեսներն ալ իրաւունք ունկած չեն ըլլար երբ ըսեն թէ Դուկէլայէ անց.քն այնպիսի գործ մ'է որոյ հաշակումն անմիջական արդիւնք կ'ունենայ՝ վհատեալ Անգլիացիներն ոգեւորելու համար։ Պուլլերի գործն այսպէս։ Լորտ Մէթուէն ի՞նչ կ'ընէ Մօտերը-Լիվրի ափանց վրայ։ Այդ դժբախտ գօրավարին նկատմամբ ալ հակասական զրոյցներ կը շրջին։ Հիւանդ է, խելագարեր է, իր զինուորներուն աչքէն ելած է, ևն. ևն։ Բարիզեան թերթ մը ալ ելաւ ծանոյց թէ Լորտ Մէթուէնի զօրքերն այն աստիճան դժգոհ են իրմէ որ բանակին մէջ սովորական շրջանն ըրած ատեն, զինուորները չեն բարեւեր զինքը։ Բարեյուսոյ հիւսիսային կողմերը զօր. Ֆրէնչ իր քաջ հեծելազօրքերով կը ջանայ երկու դարձ միանգամայն կատարել։ Կը զսպէ ապստամբ Հոլանտացիները, և կը վանէ օրանժեան Պօէրներուն յաւաջխաղացումը դէպ ի հարաւ։ Զօր. Ֆրէնչէ քիչ մը անդին զօր. Կէդէքը, որ սուտանեան պատերազմին մէջ մեծ համբաւ ստացած էր, ամրացած է իր Սդէրքսդրումի բանակեցողին մէջ, և յարձակողական հետաձգութիւններով միայն կ'զբաղի։ Այս է գրեթէ առայժմ զինուորական կացութիւնը, որմէ կ'երեւի թէ Բիմպրլի, Մէֆքինկ, Լէտիսմիթ տակաւին պաշարումէ ազատելու յոյս չեն կրնար ունենալ։ Կացութիւնը մեծ փոփոխութիւն պիտի կրէ՝ եթէ այս պաշարեալ երեք քաղաքներէն մին անձնատուր ըլլայ թշնամիին։

Լորտ Բոպէրց և Լորտ Գիչնէր տակաւին վերջնական կարգադրութիւն մը չբրին իրենց շարժումներուն համար։ Գիտենք թէ Բարեյուսոյ ցամաքն ելան, բայց անկէց ո՞ւր գացին, չենք գիտեր։ Կ'ըսուի թէ Լորտ Գիչնէր Ֆրիրի բանակեցողը պիտի երթայ, զօր. Պուլլերի մօտ, իսկ ընդհանուր հրամատարը պիտի մնայ ի Բարեյոյս։

* * *

Գերմանական Պունտսրաթ շոգենաւը, որ Տէլակոա ծոցին բացերն անդլ մարտանաւերէն բռնուելով, Տրրպանի նաւահանգիստը տարուած էր, ազատ արձակուեր է։ Պատերազմական մաքսանենգութիւն նկատուած ոևէ բան եբեւան չէ ելեր Պունտսրաթի մէջէն։ Այս դէպք քիչ մնաց դիւանագիտական մեծ դժուարութիւն մը պիտի յարուցանէր Գերմանիոյ և Անգլիոյ միջև։ Ամերիկեան ալիւրները դրաւուելուն համար ամերիկեան մամուլը դէշ խօսք չը մնաց որ չըսէր Անգլիոյ մասին։ Պունտսրաթ, կէնէրալ Հէրձօկ Գերմանն շոգենաւերուն դրումն առթիւ ևս Գերմանն մամուլը չմնաց յարձակում, լուտանք զորս չտեղար Անգլիոյ երեսին։ Բայց Անգլիա իրաւունք ունի միշտ իր կասկածած նաւերը խուզարկելու պատերազմին ժամանակ։ Եւրոպական պետութիւնք սակայն կասկածի ներքեւ կը ձգեն Անգլիոյ այդ իրաւունքը։ Այս կարծիքէն է նաեւ Գերմանն կայսրը, որ ծրագիր մը կը պատրաստէ Միջազգային Դեսպանախորհուրդ մը կազմելու

Եւրոպական մայրաքաղաքի մը մէջ, չեղոք շոգենաւերու խնդիրն ուսումնասիրելու նպատակաւ։ Այսինքն թէ ո՞ւ է պատերազմիկ տէրութիւն ե՞ր կամ ինչո՞ւ իրաւունք պիտի ունենայ չեզոք տէրութեան մը դրօշ կրող նաւը խուզարկելու, անոր նիւթական վնաս հասցնելու, քանի որ դրաւման դործողութեամբ շոգենաւն իր ճամբէն կը մնայ, ժամանակին իր տեղը չի հասնիր, և այսպէս կը վնասուին զայն բանեցնող ընկերութիւնը մասնաւորապէս և վաճառականութիւնն ընդհանրապէս։ Գերմանիոյ խորհրդարանին մէջ Պունտսրաթի դրաւումն հարցադնդման առիթ տուաւ, և արտաքին դործոց նախարարն ընդհանուր լուութեան մէջ յայտարարեց թէ Պունտսրաթ ազատ թողուած է, և անդէ կառավարութիւնը դրամական հատուցում պիտի ընէ Պունտսրաթի ընկերութեան։ Ծանրակշիռ յայտարարութիւն, որմէ կը հասկցուի թէ Անդլիա այս պզտիկ խնդրոյն մէջ ալ պզտիկ ինկած է։

Թայմզ պաշտօնապէս ծանոյց թէ Ռուսիա 30,000 զօրք կը հաւաքէ Աֆղանստանի սահմաններուն վրայ։ Երկու շաբաթէ ի վեր շարունակ Պերլինէ, Բէռդերսպուրկէ, Վիեննայէ կուգան ռուսական յառաջխաղացման մը դրոյցներ։ Ասոնք պիտի իրականանա՞ն։ Դեռ չի դիտցուիր, բայց ստոյդ է թէ Անդլիոյ համար խիստ մօտեցած է մնահոդութեան վայրկեանը։ Գոնէ անդամ մը Պուլբը Դուկէլայէն անցընենք։

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

ԱՆՀՈՒՆՆ ՈՒ ՑԱՒԻՏԵԱՆԸ

Մեր նախորդ յօդուածէն ընթերցողն անշուշտ վերահասու եղաւ թէ պիտի բացատրենք աշխարհքին կամ տիեզերքին ստեղծուիլը «ոչինչէն»։

Թող ներեն մեզ առուծաբանք, նա մանաւանդ միջին դարերու լուսահոգիները, եւ այժմէն սրտադող չունենան մեզ դէմ թէ իրենց մենաշնորհ կամ մենավաճառ գիտութեանց սահմանին մէջ ոտնձգութիւն պիտի ընենք։ «Փարդա՛ստ»։

Որպէս զի աշխարհաստեղծ գործողութեանց վրայ մեր յայտնելիք գիտական կամ տիեզերական ծանօթութիւնները լաւ ըմբռնելու դիւրութիւն մ'աւելի ունենայ ընթերցողն հարկ է պայծառօրէն հասկնալ Անհունին ու Ցաւիտեանին դաղափարները, զորս ըմբռնելու համար ալ բնաղանցաբանութեան մնացառուտ զարտուղիներէն պիտի չանցնինք, թէեւ «Բնաղանցագիտութիւն»ը (մէթաֆիզիք) գոյութեան, Աստուծոյ, հոգւոյ, բոլոր իրաց, էից եւ էակաց ծագումներն ու վախճաններն բացատրելու միակ ձեռնհատն համարուած ըլլայ գիտութեանց կամ իմաստասիրութեանց մէջ։

Կ'ուզե՞ս ըմբռնել «անհունին» կամ «անսահմանին» դաղափարը։ Ասկէ աւելի դիւրին բան չի կայ, քանի որ մեր առաջեւն ունեցած հունաւորին կամ սահմանաւորին անմիջական հետեւանքն է։

Ահա՛ ունիս ափիդ մէջ, սիրելի ընթերցող կամ ուսանող, ցուլ մը կամ դաւաղան մը, որուն կը կրթնիս քալած ատենդ։ Մոքովդ կամ երեւակայութեամբդ ուղածիդ չափ բաղմապատկէ անոր երկայնութիւնն ամէ՛ն նկողմէ։ Ենթադրէ՛ թէ միտքդ՝ երկրին ամէն արդելքներէն այլեւս ազատ՝ կը թռչի միջոցին ու ժամանակին մէջ։ յայտնի է թէ ոչ մէկ բան խոչընդոտ կ'ըլլայ ձեռքդ բռնած հունաւոր կամ սահմանաւոր իրը, ցուլը կամ դաւաղանն, ամէն կողմ ուղածիդ

չափ երկարելու կամ երկնցած մտածելու։ Եթէ կը վախնաս կամ կը կասկածիս թէ յանկարծ դէմդ լուսաւոր մը կը պատահի ու ճամբադ կը դոցէ, անհոգ եղի՛ր, ակնթա՛րթի մը մէջ, այն ճամբէն ուրիշ կը քալեն տիեզերքին փոշեհատիկները, դէմդ ելած լուսաւորն իսկոյն կ'անհետի։ Եւ եթէ հաւանական է որ պատահի հաստատուն լուսաւոր մը, անշուշտ բռնած ուղղութեանդ վրայ, ներելի է միշտ քովէն կամ ետեւէն դառնալով շարունակել մտքովդ սկսած երկայնութեան յաւելումները։

Կարելի է մտքէդ անցնի որ ուրիշ արդեւքի մը կը հանդիպիս, ինչպէս, օրինակի համար, շատ անդամ մեր հարց կամ նախահարց տգէտ ու նախապաշարեալ մտքին առջեւ եղած է. որպիսի է մեծ պատի պէս բան մը որ սահմանափակէր տիեզերքը և անոր երկարումը արգիլէր։ Բայց յայնժամ սա երկուքէն մին պիտի ըլլայ. կա՛մ սահմանաւոր պիտի ըլլայ պատը, զոր ճեղքելէդ վերջը պիտի գտնես անսահման միջոցը կամ անջրպետը՝ և կա՛մ այդ պատն ինքնին անսահման թանձրութիւն մը ունեցած պիտի ըլլայ. յայնժամ քեզ ճշտօրէն ու հաստատապէս ըմբռնել, հասկցնել պիտի տայ, մեծազանգուած ձեւի տակ, այն անհունը՝ որ առաջին անգամ խոյս տուաւ. Անհունն սա՝ հրաշալի հանգամանքն ունի որ զինքը կեցնելու, ընդհատելու համար երեւակայուած ամէն ենթադրութիւն իր վրայ աւելի յատակ և աւելի ճշդիւտ դաղափար մը տալու կը ծառայէ։ Մէկ խօսքով անհունին դէմ հանուած բոլոր սահմանները զինքն աւելի կը հաստատեն, և զայն մարդուս մտքին լաւագոյն ևս կը ճանչցնեն իր այն անըմբռնելի անորոշութեան կամ տարտամութեան մէջ, ուր կ'երեւի նախապէս։

Այն բացատրութիւններն, որք կը յարմարին հաւասարապէս ամէն ուղղութեանց, զորս կրնանք տալ ամէն հունաւոր նիւթի կամ տարրի, ինչպէս, օրինակի համար, տարրինք գաւազանին, կ'ապացուցանեն թէ անհունը կայ ամէն կողմ, ամէն ուղղութիւնց մէջ, և թէ միջոցը կամ անջրպետը՝ որու մէջ այնքան փառայեղ աշխարհները, և ոչ մէկ կողմ իրենց ճամբուն կամ ուղղութեան մէջ չեն պատահիր արդեւքի որ զիրենք կեցնէ, ինչպէս երեւմն նախնիք և մէջին դարը պարզմտօրէն կամ դիւրահաւանօրէն կը հաւատային։

Աւասիկ անհունն ու անոր դաղափարն ստացանք հիմայ կը մնայ մեզ ճանչնալ, ըմբռնել յաւիտեանն ու անոր դաղափարը, որ Արարչագործութեան դաղանեաց լաւ եւս թափանցելու կարեւորագոյն ծանօթութիւններէն մին է։

Յաւիտեանը կամ յաւիտենականութիւնն այ մարդկային մտքին շատ բնական ծանօթութիւններէն մին է, անհունին չափ։ Յաւիտեանը ժամանակին մէջ անհունութիւնն է, միջոցին մէջ անհունութեան անխուսափելի ընկերակիցը։ Նայեցէք ձեր գրպանի ժամացոյցը որ ձեզ կը նշանակէ ժամերը, կ'ըսէ Շարլը Ռիչար, այդ ժամերէն մէկովը այնքան դիւրին պիտի չլինէք յաւիտենականութիւնը որքան գաւազանով մը չլինեցիք անսահման միջոցը։ Եւ արդարեւ, երբ մէկ ժամը ծանօթէ։ ո՞վ կ'արդելու ձեզ որ անոր վրայ ուրիշ ժամեր ալ ուղղածնուդ չափ իրարու վրայ աւելցնէք և այս կերպով չինէք օրեր, տարիներ, դարեր, միլիոնաւոր, միլիարաւոր դարեր։ Թուարկեալ ժամանակներու այս անհունն, անսահման չրջանն ունենալով ձեր մտքին մէջ, ո՞վ պիտի արդիլէ ձեզ որ վերսկսիք մէկ ժամէն ու նորէն նորէն ժամերն իրարու վրայ բարդելով յօրինէք այնքան միլիարներով օրեր, դարեր և յօրինէք միշտ։ Այսպէս ընելով մի՛թէ պիտի հատնի՞, ոչնչանա՞յ ինչ որ կայ տիեզերքին մէջ։ Սակայն ժամանակն այն տեսակ գոյութիւն մը ունի որ աշխարհի բոլոր բաներուն ունեցած գոյութենէն անկախ է, և ձեր ժամացոյցն ա դնելով զայն անկութեան կամ ոչնչութեան ծոցին մէջ, պիտի չարունակէ նշանակել ժամերը ճիշտ միեւնոյն կանոնաւորութեամբ, որով կը նշանակէր ձեր գրպանին մէջ եղած ատեն։ Այսէն բացարձակ ճշմարտութիւն ժամանակին պէս նոյն առանձնաշնորհումը կը վայելէ։ Ջնջեցէք աշխարհը, և Եւդիտէսի պէս (նախկին յոյն երկրաչափ) «թէ օրէ մ» ները պիտի չդադրին գոյութիւն ունենալէ. թէեւ զանոնք հասկցող խելք մ'ալ այլ եւս չկենայ։ Անհունին ու յաւիտենականին դաղափարները մեր գոյութեան դաղափարին չափ,

մարդուս մտքին բնական երկու յղացումները մտածումներն։ Երբ մեր ապրիլը կ'զգանք նոյն պահուն իսկոյն կ'զգանք նաեւ թէ կախուած մնացած ենք այս երկու անեզր անպարագիր անսահմանութեանց ծոցին մէջ ուրք միայն կարող են պարագրելու մեր ցանկութիւնները. և աշխարհի ստեղծագործութեան երկու հիմնաքարերն ըլլալու։

ԱՆՀՈՒՆԻՆ ՀԻՒԹԸ.— ԵԹԵՐԸ

Սկսինք ուրեմն չափելի կերպով մեզ բմբռնելի ընել անհունն ու յաւիտեանը, և այս երկու վերացեալ մեծ հիմանց վրայ կառուցանել արարչագործական շէնքը։ Թէեւ վերացական ըմբռնումները գերբնաղանց բաներ են, սակայն մատնելի է թէ աւելի հեռուն երթալու համար, ուրիշ աւելի հիւթաւոր, գոյաւոր փաստեր փնտռելու ենք։ Այսօրինակ օգտակար նիւթեղէններ ճարելու համար դիմենք այժմ եթերին։

Սակայն նախ հասկնանք թէ ի՞նչ է եթերը։ Ահա եթերին նկատմամբ առնուած վերջին տեղեկութիւնները. զորս այժմէն կըրնանք տալ Անհունն, որոյ վերայ խօսեցանք քիչ մ'առաջ, պարապ չէ բառին բացարձակ իմաստովը։ Ոչ մէկ տեղ պարապութիւն կայ, թէեւ բարկանալու չէ որ չինական փիլիսոփայ մը տասն և եօթն տեսակ պարապութիւն կը համրէ։ Ամէն տեղ որ միջոց կայ, նոյն իսկ այն տեղն ալ երբ հոն չկենայ ո՛չ կարծր, ո՛չ հեղուկ և ո՛չ կազային ո և է մարմին մը, նիւթ մը, կա՛յ հոն տակաւին բան մը։ Այս բանն ալ իսկապէս եթերն է, որուն վրայ ծանօթութիւն տալ կ'ուզենք։

Ամենալաւ չինուածներէն օդահան մեքենայ մը առէք, և ամենէն ճարտար վարպետին ձեռամբ, գիտութեան ու ճարտարութեան ծայր աստիճան զգուշութեամբ, խողովակին մէջէն պարպեցէք օդը ցվերջին հիւլէն, և ահա պիտի դտնէք թէ եթերը խողովակին մէջն է դեռ։ Ոչ հիւթէ ալ կազմուած ըլլայ մարմին մը, եթերը միշտ անկէ ներս կը թափանցէ։

Նայեցէք ձեր պատուհանին ապակիին։ Օդին մէջ կը փչէ հովը, ծառերն իրար կ'անցին իրր թէ իրենց տեղէն մեկնիլ ուզէին գեանէն փոշոյ մրրիկներ կը բարձրանան և կուգան փչրուիլ տան պատերուն վրայ, բայց բոլոր այս ապառնալից յուզմունքը կանգ կ'առնէ դիւրաթեք արդելքին առջեւ որ ղեզեզ կը դատէ հողմն, եւ դուք ալ բնականաբար տակէ կը հետեւցնէք թէ դուրսի պատահարներէն ապահով էք։ Միամի՛տ ու խաբուսի՛կ յոյս։ Եթերը կը թափանցէ ձեր պատուհանին ապակիներէն, պատերէն, նոյն իսկ ձեր մարմիններէն ներս կը մտնէ ու ձեր մէջ կը շրջապտի այնքան ազատօրէն որ իբր թէ ոեւէ խոչնդոտ կամ արգելք կարող չըլլար անոր անցքը կատարելու։ Մեր ճանչցած կազերէն ոչ մին կրնայ եթերին հետ բաղդատուիլ նրբութեան, անօսրութեան կողմէ։ Օդը, որ զմեզ կը պատէ, և շարժմանքը կը փայփայէ մեր դէմքը, անոր քով «Հիմալայ» մրրիկ մ'է, և ջրածին կազը, որ օդէն 10 անգամ աւելի թեթեւ է, և այս պատճառաւ օդապարիկները վեր կը բարձրացնէ, Ալպեանց Սէնի լեռնէն թաւալող խոշոր ամպ մ'է անոր առջեւ, կշիռքի մը նժարի մէկ թաթին մէջ ասկէ լուսին հասնելու չափ բարձր եթերի բո՛ւրդեր, և նժարին թաթը չի շարժիր։ Այս զանազան հանգամանքներէն դատելով, կըրնանք սահմանել թէ եթերը ծայրաստիճան նուրբ, անօսր, անըմբռնելի, աներեւոյթ, անկշռելի հեղուկ մ'է որ կը լնու անհունը, և կը ներկայացնէ այս անհունին մարմինն իսկ։

ՏԵՍ. ԵՒ ԳՈՐԾ. ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ
ԱՇԽԱՐՀԻԿ ԼԵԶՈՒԻ

Յօրինեց՝ ԲՐԻԶԱՆԴ Մ. ՊՕԶԱՃԵԱՆ

«Տարրական ընթացք».— 80 երեսէ բաղկացեալ կը պարունակէ 31 ընթերցուած և 212 հրահանգ, մին քան զմիւսն չահեկան։ Գին 2 ղրուշ։

«Միջին և Բարձ. ընթացք».— 208 երեսէ բաղկացեալ. կը պարունակէ 50 ընթերցուած, լուսագոյն հեղինակներէ քաղուած և 200 հրահանգ։ Գին 4 ղրուշ։

Սոյն երկու Քերականութիւններն իրենց տեսակին մէջ լուսագոյններն են, և հետեւապէս ջերմապէս կը յանձնարարենք Հայերէնի ուսուցիչներուն ուշադրութեան։

Ազգ. Վարժարաններուն համար 25 առ հարիւր զեղջ։

ՍԻՐՈՅ ԻՏԵԱԼԸ

ՁՈՒՐԲԸ կամ ԵՌԵՍՈՒՆՔԸ

Դ

Մեր համոզմանց հաստատամքը մեր ասպարն է այծենակաճ,
Զո՛ւր աղեղունք ընդդէմ լարուին, Տէրն ունինք մենք մեզ ապաւէն։
Մեր սրտին մէջ՝ Տիրոջ երկիւղն է մեր սկիզբն իմաստութեան.
Թէ խոց ունի՛ն մեր կուրծք, ճակատ, այլ մեր քամակ չունի կորանք։
Մեր անկումն իսկ նկնումը չէ, այլ նուաճման նոր սրտոտում,
Պարթեւեան է մեր նահանջը, յաղթանակին պահանջն է այն։
Մեր հանպանակ չունի դրժանք, և մեր սէրը՝ խեռին դժնիկ։
Մերկ սի՛րան ենք մեր չրթանց վերայ, և մեր աչաց մէջ՝ մերկ հոգին,
Սեռն ու սերտ սէ՛րն՝ որ կը վառի բոց մորենի դէմ Որէնին,
Մեր սուրբ ուխտի մայր-խորանին՝ լիսհաւատ պատարագուոր։
Զի՞ փոյթ մեզ թէ ճապաղ աշխարհն ի՞նչ կ՚անդամէ զմեր սիրոյն։
Թողո՛ւնք աշխարհն աշխարհվարաց թող ըստ կամս ոլջուսմեւել,
Խցիկն է մեր սիրոյն մատուռ, աշխարհք-ծովէն զատուա՛ծ կղզի։
Թերհաւատից ու անմաքրից գոչենք «ըստ դրո՛ւնս եղէք ի դուրս»։
Մէսիային խարազանովն Աստուծոյ տան գաւիթն ալենք։
Մողբին տեղ՝ Եհովան մենք վերհաստատանք գահուն վերայ։
Սէրս է կրօնք Տիրամօր չափ պաշտեմ Հուրիս եղեմահարս,
Անոր շրթնովն ես կը շնչեմ, անոր ծնկովն ես կ՚աղօթեմ,
Անով տուն է «գտեալ դրախտ»,, հիւղն՝ ապարան, գրգլեակը՝ գորգ։
Աշխատանքը՝ ինձ զբօսանք, կեանքն՝ անապակ երանութիւն.
Աւ սէր ներա ես թողուեցայ աշխարհքէն ու իր մարդերէն,
Հորիզոնէն անդին զնե յաւերժաղջիկ հարս պաշտելու,
Մշտնջենին ու անհունին անջրպետաց մէջ ներա հետ՝
Սիրոյ հիւլէ՛, արարչութեան շունչ ժուռ դալու աստղերէ պարզ,
Ընկլուզելով ծոյն Անմահին, անտի ընդ միշտ նորաստեղծեալ
Գալ մեր սիրած մթնոլորտէն բիր նշուլեալ ցամքած աչքին,
Դոյն գոհարուիլ թաշնած ծաղկին, կաթել հունձքը ակօսին մէջ,
Սիսիփանքի կանթեղ վառիլ այրոյն մարած հիւղեկին մէջ.
Կայծ տալ շիջեալ վառարանին, տալ ծերունւոյն ցուպ մխիթար։
Ու թէ կաղնին կոկոզավիզ յընչաց քերէ եղէգն աղկաղկ
Ամպածրար գոռոզ գլխուն վերայ իսկոյն չա՛նթ փառատուիլ.
Հերձեալ հոգեաց ընդ մէջ ձգուած սիրոյ կամուրջ, դիծ միութեան,
Ու ճեղքելով դարերն անցեալ մոխրէն փիւնիկն յարուցանել,
Զայն մեր սիրոյ կապոյտ երկնէն կախել արեւ տիեզերաջահ
Ալլալ, ա՜հ, Բանն արարչական ու ստեղծել զոր բան չունինք
Ու «չունինք»ի վիհ թոհրոհէն վերբերել Սէր-Համագոյքը,

ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՎԵՐՋ

ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Կ. ՓԻՇԹՕՖՃԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Մասնաճիւղ

11 Գատըգիւղ, Փափաղ փողոց 11

Վաճառատունս պատիւ ունի ծանուցանել Սկիւտարի և Գատըգիւղի յարգոյ ազգայնոց թէ Կաղանդի առթիւ ընտրանօք բերել տուած է ճաշակաւոր կաղանդէջքներ և զանազան առարկաներ։

Սոյն վաճառատան մէջ պատրաստ կան նաեւ ամէն տեսակ դըպրոցական պիտոյք, ձեռագործի տերեւ, ամէն տեսակ թուղթ, թէյ, պաքսիմատ, շաքարլա, հարսանեկան շաքար ևն։

Գաւառներէն մեծ յանձնարարութիւնք կը կատարուին փութով և ճշտութեամբ։ ՀԱՍՑԷ. Կ. Փիշթօֆճեան, Կալաթա, Տէիրմէն խան։

ԱԶՆԻՒ ԸՆԹԵՐՑՈՂ

Կ'ուզե՞ս հեշտիւ խմել

անխառն իւղ Մօռիւ Ձկան

ՀԱՃԻ՝ ԴԻՄԵԼ

Կէտիք—փաշա Պաշի

"ՍՈՒԼԹԱՆԻԷ" ծանօթ Դեղարան

Զոր կը վարէ Լ. Կիւմիւշեան

ՏԱՐՐԱԿԱՆ ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՄՏԱՒՈՐ ԵՒ ԴՐԱՒՈՐ

Ա. եւ Բ. Տարի

Յօրինեց Դ. Գավաֆեան

Գ. անգամ տպագրուեցաւ կարեւոր յաւելումներով։ Իրրեւ թուաբանութիւն, իր տեսակին մէջ գերազանց է իր մեթոտով, իր պարունակած գործնական խնդիրներով, եւ շահեկան դիտելիքներով, յատկապէս Կրթական ծրագրին համաձայն յօրինուած՝ տարրական Դասընթացքներու համար։ Կը յանձնարարենք բոլոր թուաբաններու ուշադրութեան։ Գին 4սկէս դրշ. — Կեդրոնատեղի Պալենց Գրատուն։

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ.—Հանրագիտակի կողքին ծրեք էջերը ծանուցմանց յատկացուած են։ Անոնք որ կը հաճին մէկ տարեկան բաժանորդագրուիլ կրնան իրենց ծանուցումները Զրի հրատարակել տալ 10ական տող, 3 անգամուան համար. իսկ 50 տող մէկ անգամուան համար։

Բաժանորդագրութիւնք կ'ընդունուին, եռամսեայ, վեցամսեայ և տարեկան,

ՄԵՐ ՀԱՍՑԷՆ

"Հանրագիտակ,,ի վերաբերեալ ամէն գրութիւն պէտք է ուղղել "Ծաղիկ,,ի Տպարանը, առ Տնօրէնութիւն "Հանրագիտակ,,ի։